Քաղաքացիական Ծառայության Պաշտոնի Անձնագիր
12-2-ՔՀ3-Մ2-1

Գլխավոր իրավաբան (2022-11-22)

1. Ընդհանուր դրույթներ

1.1 Պաշտոնի Անվանում, Ծածկագիր

Քրեակատարողական ծառայություն | ՀՀ ԱՆ «Վարդաշեն» քրեակատարողական հիմնարկ | Սոցիալական, հոգեբանական և իրավական աշխատանքների բաժին | Գլխավոր իրավաբան, (12-2-ՔՀ3-Մ2-1)

1.2 Ենթակա և հաշվետու է

1.3 Փոխարինող պաշտոնի կամ պաշտոնների անվանումները

Գլխավոր իրավաբանի բացակայության դեպքում նրան փոխարինում է Բաժնի գլխավոր սոցիալական աշխատողներից մեկը կամ Բաժնի գլխավոր հոգեբանը:

1.4 Աշխատավայր

Հայաստան, ք.Երևան Նուբարաշենի խճ., 7:

---

2. Պաշտոնի բնութագիր

2.1 Աշխատանքի բնույթը (գործառույթներ), Իրավունքները, Պարտականությունները

1. խորհրդատվական բնույթի աշխատանքներ է իրականացնում կալանավորված անձանց և դատապարտյալների իրավագիտակցության բարձրացման, քաղաքացիաիրավական հարաբերություններում ծագած խնդիրների կարգավորման նպատակով.
2. դատապարտյալի իրավաբանական խնդիրների լուծման նպատակով, ըստ անհրաժեշտության կազմակերպում է խորհրդատվական աշխատանքներ.
3. իրավական խորհրդատվական բնույթի աշխատանքներ է իրականացնում պատժախցում գտնվող կալանավորված անձանց և դատապարտյալների հետ.
4. մասնակցում է դատապարտյալներին պատիժը կրելուց պայմանական վաղաժամկետ ազատելու, պատժի չկրած մասն ավելի մեղմ պատժատեսակով փոխարինելու, ուղղիչ հիմնարկի տեսակը մեկուսացվածության առավել ցածր (բարձր) աստիճանի փոխելու և այլ բնութագրերի կազմման աշխատանքներին.

Իրավունքները.

1. համապատասխան ստորաբաժանումներից պահանջել դատապարտյալների և կալանավորված անձանց վերաբերյալ լրացուցիչ փաստաթղթեր, հիմնավորումներ, պարզաբանումներ և այլ անհրաժեշտ տեղեկատվություն

2. ներկայացնել առաջարկություններ, դիտարկումներ ու հիմնավորումներ բաժնի պետին դատապարտյալների և կալանավորված անձանց հետ տարվող իրավաբանական աշխատանքների վերաբերյալ.
3. համապատասխան ստորաբաժանումների ներկայացուցիչների հետ մասնակցել դատապարտյալների և կալանավորված անձանց հետ տարվող աշխատանքների շուրջ մասնագիտական քննարկումներին.
4. մասնակցել իրավական ակտերի նախագծերի վերաբերյալ համատեղ քննարկումներին.
5. ծանոթանալ դատապարտյալների և կալանավորված անձանց կողմից ներկայացված դիմումների բովանդակություններին, նյութերին

Պարտականությունները.

1. կատարել կալանավորված անձանց և դատապարտյալների ընդունելություն, տրամադրել մասնագիտական խորհրդատվություն.
2. ուսումնասիրել ստացված դիմումները, առաջարկությունները, օրենքով սահմանված ժամկետում պատասխանել դիմումներին, առաջարկություն ներին.
3. կալանավորված անձի և դատապարտյալի՝ Հիմնարկ ընդունումից հետո ծանոթանալ նրա անձնական գործին, կատարել ընդունելություն.
4. կազմել կալանավորված անձանց և դատապարտյալների հետ իրականացված իրավաբանական խորհրդատվության աշխատանքների վերաբերյալ փաստաթղթերը.
5. ուսումնասիրել դատապարտյալների ներման խնդրագրերի վերաբերյալ նյութերը և կազմել բնութագրերը

---

3 Պաշտոնին ներկայացվող պահանջներ

3.1 Կրթություն, որակավորման աստիճանը

1.	Ուղղություն	Գործարարություն, վարչարարություն և իրավունք	
1.	Ոլորտ	Իրավունք	
1.	Ենթաոլորտ	Իրավունք	Միջոլորտային մասնագիտություններ
1.	Մասնագիտություն	042101.00.6. Իրավագիտություն կամ 042101.00.7. Իրավագիտություն	Դատական փորձաքննություն

3.2 Մասնագիտական գիտելիքները

Ունի գործառույթների իրականացման համար անհրաժեշտ գիտելիքներ:

3.3 Աշխատանքային ստաժ, աշխատանքի բնագավառում փորձը

Հանրային ծառայության առնվազն երկու տարվա ստաժ կամ երեք տարվա մասնագիտական աշխատանքային ստաժ կամ
իրավունքի բնագավառում՝ երեք տարվա աշխատանքային ստաժ:

3.4 Անհրաժեշտ կոմպետենցիաներ

- ԸՆԴՀԱՆՐԱԿԱՆ
  - Խնդրի լուծում
  - Հաշվետվությունների մշակում
  - Բարեվարքություն
  - Տեղեկատվության հավաքագրում, վերլուծություն
  - Ծրագրերի մշակում
- ԸՆՏՐԱՆՔԱՅԻՆ
  - Բանակցությունների վարում
  - Կոնֆլիկտների կառավարում
  - Բողոքների բավարարում
  - Ժամանակի կառավարում
  - Փաստաթղթերի նախապատրաստում

---

4 Կազմակերպական շրջանակ

4.1 Աշխատանքի կազմակերպման և ղեկավարման պատասխանատվությունը

Պատասխանատու է կառուցվածքային ստորաբաժանման աշխատանքների բնույթով պայմանավորված մասնագիտական գործունեության անմիջական արդյունքի համար:

4.2 Որոշումներ կայացնելու լիազորությունները

Կայացնում է որոշումներ աշխատանքների իրականացման բնույթով պայմանավորված մասնագիտական եզրակացությունների տրամադրման և դիմումների քննարկման արդյունքում որոշումների նախապատրաստման և ՀՀ օրենսդրությամբ նախատեսված դեպքերում որոշումների կայացման շրջանակներում:

4.3 Գործունեության ազդեցությունը

Ունի տվյալ մարմնի նպատակների և խնդիրների իրականացման համար մասնագիտական գործունեության տարածքային ազդեցություն:

4.4 Շփումները և ներկայացուցչությունը

Իր իրավասության շրջանակներում շփվում և որպես ներկայացուցիչ հանդես է գալիս համապատասխան մարմնի այլ կառուցվածքային ստորաբաժանումների ներկայացուցիչների, այլ մարմինների և միջազգային կազմակերպությունների ներկայացուցիչների հետ, հանդես է գալիս համապատասխան մարմնի ներսում

և համապատասխան մարմնից դուրս ձևավորված մասնագիտական աշխատան քային խմբերում

4.5 Խնդիրների բարդությունը և դրանց լուծումը

Իր լիազորությունների շրջանակներում բացահայտում է մասնագիտական խնդիրներ և այդ խնդիրներին տալիս է մասնագիտական լուծումներ և մասնակցում է կառուցվածքային ստորաբաժանման առջև դրված խնդիրների լուծմանը: